

3779

895.6  
P-51

QITABЫ VӘKTINDӘ KAJTARЛNЛZ  
ВОЗВРАЩАЙТЕ КНИГУ В СРОК

55  
71.  
464  
464

10/5

464

464

Neçе dәfә vәrilmisdur  
Количество предыдущих выдач.....

208



# ԹԵՐԱԿՈՅԱԾ

Բիբլիութեառնական

Բան, Արև, Խոհեմազ, Յանձնական

ԳԻՒՂԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱ

ՄԵԿ ԱՐԱՐԻԱԾՈՎ.

օց

Թարգմ.

ԱՄՑԴԻԿ ԱՄԲԱՏԵԼԻՆ



ԹԵՐԱԾ

Տպարան ՀԵՐԱՐԴԱՅՆ Գրասենյակի փող., № 6. Տեղայուն № 566.

1913

895  
PHS

map № 106

ԱՐ Նº 106 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԳԻ

№ 106

Թ Ե Ր Ա Կ Օ Յ Յ Ի-97

895


## ԳԻՒՂԱԿԱՆ

3779

5376

# ԹԵՍՈՒՄՆԱՐԱՆ

ՀԱՐՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱ



ԱՏԴԻԿ ՍՄԲԱՏԵԱՆ

19916

P H B L H U

Տպարան «ՀԵՐՄԵՍ», Գրաֆուկայտ 6. Տելեֆոն № 566.

1912

2013

U 80 μ u d g

## СТАНОВЛЕНИЕ

新編世界地圖



1702  
41

# ՅԱՊԱՏՅԱՆ

«Թերակօյա»-ի կամ «Դիւղական ուսումնարան»-ի գլխաւոր գործողութիւնն է պատմական այն ողբերգութեան, որ կոչում է Սահավարա Դեմքու կաղամի: Այս ողբերգութեան վրայ աշխատել են 4 հեղինակներ՝ ճապոնացի յայտնի բանաստեղծ-դրամատուրգ Հակեղա Իցումին († 1740) և երեք աշխատակիցներ: Յաճախ այս պիեսը դրսում է Գանզես անունով, սակայն ամենասիրուած գործողութիւնը «Թերակօյն» է, ողբերգութեան ամենաազդու մասը: Եթէ գլխաւոր գերերը յաջող են բաժանուած լինում և մանաւանդ եթէ այդ գերերի մէջ (Մատու և Գենզօ) մասնակցում են յայտնի գերասաններ Դանժուօն և Կիգուգուրօն, ողբերգութիւնը այնպիսի մի ցնցող տպաւորութիւն է գործում, որպիսին աշխարհիս ոչ մի բեմից չի կարելի ստանալ: Թատրոնում չի լինում մի մարդ, որ լաց չըլինի: Որպէսզի պիեսը հասկանալի լինի, անհրաժեշտ են մի բանի ծանօթութիւններ:

IX դարու վերջերում ճապոնական կիօտո քաղաքի կայսերական պալատում ապրում էր ամենայայտնի ճապոնական բանաստեղծներից ու գեղագիրներից մէկը—Սագավարա Միշիզա-նէն—տէրութեան երկրորդ նախարարապետը (Կանցլերը), Շիրատային, Միշիզանէի կալւածներից մէկի կապալառուն, որ իր տիրոջ մօտ մէծ յարգանք էր վայելում, խնամում էր նաև իր տիրոջ երեք սիրեցեալ ծառերը. սալորենին (ումէչ), բալենին (սակուրա) և եղնանին (մաստու): Մի գեղեցիկ օր երեքորեակ զաւակների հայր գարձաւէ Սյդպիսի մի դիպւած այն ժամանակւայ հասկացողութեամբ ամբողջ երկրի բարեբախտութեան նշան էր համարւում: Միշիզանէն իր կապալառու զաւակների հովանաւոն էլ եղաւ և իր սիրած ծառերի անունները տւեց նրանց—Ումէօ, Սակուրամարու և Մատոսու: Երբ նրանք մեծացան, առաջին երկուսը Միշիզանէի մօտ ծառայութեան մտան և սամուրայների (ասպետների) կոչում ստացան, իսկ երրորդը՝ Մատոսուն ձախի կողմի նախարարապետ Փիղմիվարա Տօկիիսերի (Կամ Շիհիէի) ծառայութեան մէջ մտաւ: Որովհետև Շիինէյր փառասիրութեամբ կուրացած կայսեր դէմ գաւառդրութիւններ էր կազմում և նոյնիսկ երազում էր նրա իշխանութիւնը ձեռք ձգելու, իսկ հաւատարիմ Միշիզանէն ընդհակառակը աշխատում էր խորտակել նրա ծրագիրները, ուստի երկու բարձրաստիճան այդ անձնաւորութիւնների մէջ սաստիկ թշնամութիւն ծագեց: Ստկայն ճարպիկ Շիխէն կամ Տօկիիսերին յաջողուեցաւ կայսեր մէջ կասկածներ յարուցանել դէպի իր թշնամին (Սագավարա Միշիզանէն) և աքսորել տալ—Քիուշու կղզին: Միշիզանէի ընտանիքը և կուսակից-

Ները ցրւեցան ամեն կողմէ: Բայց որովհետև Շիխէլը աքսորւած հակառակորդի սերնդից էլ գեռ վախճնում էր, վճռեց ամբողջապէս ջնջել նրա ցեղը: Այդ միջոցին Գենզօն Միշիզանէի նախկին աւատականը և սամուրայը (ասպետ) իր տիրոջ կրասեր զաւակին, Շիւսային փրկեց և գաղթեց մի հեռաւոր փոքրիկ զիւղ, Սերիօ, ներկայացնելով նրան որպէս իր հարազատ որդի: Այստեղ նա բնակութիւն հաւատաեց, որպէս չինական վայելչազրութեան ուսուցիչ, մի արւեստ, որ նրան ինքը Միշիզանէն էր սովորեցրել, և բաց արեց գիւղական մի ուսումնարան (Թերակօյա), որտեղ և տեղի ունեցաւ այս դրաման:

Արդէն եօթանասնամեայ Շիրատայի դաւակներից, որոնց հովանաւորում էր Միշիզանէն, Ումէօն հետեւց նրան դէպի աքսորազայը, Սակուրամարուն մեռաւ՝ պաշտպանելով իր տիրոջ, իսկ Մատսուօն մնաց իր բարերարի ոխերիմ թշնամի: Շիխէի ծառայութեան մէջ: Մատսուօի այս վարժունքը սաստիկ վշտացրեց Միշիզանէին և նա իր երախտագիտութիւնն ու վիշտը արտայայտեց այս յայտնի ոտանաւորի մէջ:

Հետեւում է ինծ օդով սալորը  
Թոռմեց, թորշոմեց, չորացաւ բալը  
Մի՞թէ աշխարհումն միան եղենին  
Մնաց անհոգի, անհաւատարիմ:

Թէկ Մատսուօն աւատական երգմամբ Շիխէի հետ էր կապւած և ըստ երեսյթին նրա կողմն էր—սակայն սրտանց Միշիզանէին էր նւիրւած, և այդ ապացուցեց նրանով, որ իր հարազատ որդուն զոհեց Միշիզանէի որդի Շիւսայի փոխարէն, երբ այս վերջնիս ապաստարանը բացւեց, իսկ իրեն, Մատսուօին, պատւիրեցին Շիւսայի գլուխը յանձնել Շիխէի դեսպանին, նախապէս ստուգելով գլխի իսկութիւնը: Թերակօյայի գործողութիւնը հէնց այս միջնադէպն է կազմում: Միշիզանէն վախճանեց հետեւել 903 թ.: Նրա մահանից յետոյ նրա հակառակորդները կրեցին ամեն տեսակ դժբախտութիւններ և անյաջողութիւններ, որ մնութիապաշտ ժողովուրդը վերագրում էր Միշիզանէի վրէժինդրութեան հոգիներին: Միշիզանէն դասւեց աստւածների շարքը: Նրան երկրագում են Տեսպուսին անւան ներքոյ՝ իբրև գեղագրութեան, արւեստի աստծու: Նրա յիշատակին բազմաթիւ կռատուններ են նւիրւել ձապոնիայում:



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԵՆԶՕ, աքսորւած երկրորդ նախարարապետ՝ Միշիզանէի նախկին աւատականն ու աշակերտը: Մասնաւոր դպրոցի ուսուցիչ:

ՏՕՆԱՄԻ, նրա կինը.

ՄԱՏՍՈՒԻՕ, առաջին նախարարապետ Տօկիիիրի աւատականը.

ՉԻՅՈ, նրա կինը.

ԿՈՏԱՐՈ, նրանց որդին (8 տարեկան).

ԴԵՄԲԱ, Տօկիիսերի մօտ ծառայում է սենեկապետի պաշտօնով: ԿՎԱՆ - ՇիհիՍԱՅ, Միշիզանէի որդին (8 տարեկան), որ այժմ համարւում է Գենզօի որդի, որի տանը հէնց դաստիարակւում է:

ԿՎԱՆ-ՇիհիՍԱՅի մայրը, — աքսորւած Միշիզանէի կինը:

ՍԱՆՍՈՒԻԿԻ, Մատսուօյի ծառան:

ԵՈԹ ԳԵՂՉՈՒԿ երեխաներ, 8-ից—10 տար. Գենզօյի աշակերտները: Նրանցից մէկը, 15 տարեկան: Գիմակելը բարձրահասակ է, պարզ և ժիր:

ՊԱՀՆՈՐԴԻ, Գիմբրայի հրամանատարութեան ներքոյ:

Գիւղացիք.

Գործողութեան տեղն է Գենզօի տունը, ուսումնարանական մի սենեկ, հեռաւոր Սերիօ գիւղում:

Անցքը պատահում է 902 թւին:



## S b U h L 2.

(Ցօնամին լուրս է զալիս հարհան սենեակից)

## S b U h L 1.

ՇԻՒՍԱՅ. ԳԻՄՊԵԼ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Աւակերտները Շիւսայի հետ պազել են սեղանիկների առաջ, որնց վրայ կան տետրակներ եր չինական մելանով արկդիկներ։ Խւախանչիւր սեղանի մօս գրեթե համար մի փոքրիկ արկդ կայ։ Բոլորը վրձինը ձեռքներին վարժուու են նապնական եւ չինական տառեր գրելոր մէջ։ Ցանախ ընդհատումն եւ աղմուկ, նատերի երեսը եւ ձեռքները տուի մրուած են։

**ԳԻՄՊԵԼ.**—(դառնուու է զէպի աշակերտները): Ցիմարութիւն է նստել և սովորել այն ժամանակ, երբ ուսուցիչը տանը չէ (տետրակը բարձրացնում է), նայեցէք այստեղ։ Ես նկարեցի մի քաշալ բօնգա\*). (Ժիծաղ, մեծամասնութիւնը բարձրանում է տեղից։ Չայներ, աղմուկ)։

**ՇԻՒՍԱՅ.**—(շարունակելով ջանասիրով թեամբ գրել): Եաւ կըլինէր, որ դու զբաղւէիր ուրիշ գործով, քան թէ այդպիսի յիմար նկարներով։ Դու այդքան մեծ ես, բայց չըգիտես զրել ամենահասարակ նշաններն անգամ. գոնէ ամաչիր։

**ԳԻՄՊԵԼ.**—Ի՞նը կէ։ Դու օրինակելի՞ ես։ Նայեցէք այս օրինակելի երեխային։ «կոտրած գդալ»։

**ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏ.**—(հետեւից խփում է նրան քանոնով): Հը, մի հայհոյիր, Գիմպել, թէ չէ..

**ԳԻՄՊԵԼ.**—(ակսելով ոռնալ) Առւ, առւ, ինձ ծեծեց... (Ցուշի արկը շուտ է տալիս նրա զլիսին)։

**ԵՐԿՐՈՐԴ ԱՇԱԿԵՐՏ.**—Այ քեզ յիմար... ամենից մեծն է, բայց հէնց որ մէկը կպաւ, իսկոյն լաց կըլինի։

**ԵՐՐՈՐԴ ԱՇԱԿԵՐՏ.**—Մի լաւ հասցըէք այդ մեծաբերանին (շատերը նրա վրայ են յարձակուու քանոններով. ընդհանուր իրարանցուու եւ մեծ աղմուկ)։

\*). Բօնգա—նշանակում է ճապոնական կամ չինական քուրմ,

**ՏՕՆԱՄԻ.**—Ցիմար անպիտաններ, դարձեալ միմեանց հայհոյում էք։ Զըպիտի հանգստանաք։ Իսկոյն նստեցէք ձեր տեղերը և վճռեցէք ձեր խնդիրները։ Ձեր ուսուցիչը շուտով կըվերադառնայ տուն։ Եթէ դուք եռանդով պարագէք, ճաշից յետոյ ազատ կըլինէք։

**ՇԱՏԵՐԸ.**—Այ լաւ բան, այ լաւ բան, գէ գրէք, գրէք (բոլոքը սկսում են իրենց գործը։ Դրում են եւ կիսածայն կարգում) Ի-րո-խո-նի-խո-խէ-տօ, ...

## S b U h L 3.

(Զիյօ մտնում է Կօտարօի ծեռքից քոնած. Նրա յետեւից զալիս է Սանտուկէ, որ մերում է մի փոքրիկ գրադարակ եւ երկու կասրց)

**ՍԱՆՍՈՒԿԻ.**—(դրան միջից): Խօլեայ, կարելի՞ է մըտնել։

**ՏՕՆԱՄԻ.**—Համեցէք, համեցէք։  
**ՉԻՅՕ.**—(մտնելով Կօտարօի հետ): Ձեր ողորմած թոյլատւութեամբ (փոխաղարձ ողջոյններ զլիով) նրան, որ այսօր վաղ առաւտեան իմ կողմից եկել էր պարոն Գենզօի մօտ, հարցնելու, արդեօք կընդունի իր գպրոցում իմ զաւակին, պարոն Գենզօն տւել էր իր բարեհաճ համաձայնութիւնը։ Ուստի ես էլ շտապեցի բերելու երեխային։ Ահա նա։

**ՏՕՆԱՄԻ.**—Ա, այս ձեր երեխան է, սրտանց ուրախ ենք։ Ի՞նչ գեղեցիկ և ազնիւ երեխայ է։

**ՉԻՅՕ.**—Դուք շատ սիրալիր էք։ Ցուսով հմ, որ նա ձեզ դժւարութիւն չի պատճառի։ Մենք ընդամենը մի քանի օր է, ինչ ապրում ենք այս զիւղում և բոլորովին միւս ծայրում։ Ես շատ ուրախացայ լսելով, որ դուք էլ նոյն հասակի որդի ունէք, ինչ որ ես։ Նա այստեղ չէ։

**ՏՕՆԱՄԻ.**—Ի՞նչպէս չէ, այ այնտեղ է, (Շիւսային) արք այստեղ, բարեկիր տիկնոջը. (Շիւսայ մօտենում է եւ խոր զրուխ է տալիս). ահա, սա Գենզօի որդին է և նրա ժամանգը։

**ՉԻՅՕ.**—(երկար նայում է երբեմն Շիւսային, երբեմն իր որդու երեսին)։ Ձեր որդին չքնաղ ու սիրադէմ երե-

խայ է, տիկին Գեհնզօ: Սակայն ես ձեր ամուսնուն չեմ տեսնում, միթէ տանը չէ:

**ՏՕՆԱՄԻՒ.**—Դժբախաբար: Նրան այսօր առաւտաւանից կանչեցին տանուտէրի մօտ խորհրդի և տօնական խնձորի. իսկ որովհետեւ այդ տունը այստեղից շատ հեռուէ, գուցէ ուշ վերադառնայ: Սակայն եթէ ուզում էք, հէնց այժմ անձամբ նոյն հետ խօսել, ես կարող եմ մէկին ուղարկել նրա յետեից:

**ԶԻՅՈ.**—Ոչ, ոչ, նեղութիւն մի կրէք, ես դեռ պէտք է գնամ հարևան գիւղը. այստեղ շատ գործեր ունեմ: Մինչև որ գործս վերջացնեմ և վերադառնամ, պարոն Գեհնզօն էլ եկած կըլինի, Հէյ, Սանսուկէ. բեր այստեղ իրերը: (Սանսուկէն տալիս է նրան երկու կապոց. առաջին կապոցը փաթաթած է սպիտակ թղթով, ընծաներ պատկերացնող նշաններով: Քաղաքավարի դնում է Տօնամիի առաջ): Ահա այս փոքրիկ ընծան, խնդրեմ սիրով ընդունէք՝ իբրև այս օրւայ յիշատակ:

**ՏՕՆԱՄԻՒ.**—(խոր գլուխ տալիս): Ա՛յ, դուք շատ բարեհաճ էք դէպի մեզ, ճշմարիտ, չափազանց:

**ԶԻՅՈ.**—Զարժէ այդ մասին խօսել: Իսկ ինչ որ գըտընւում է այս արկղում, այն էլ մանուկների համար է, ձեր աշակերտների:

**ՏՕՆԱՄԻՒ.**—Շատ, շատ շնորհակալ եմ ձեր քաղցր ուշադրութեան համար: Իմ ամուսինս էլ շատ շնորհազարտ կըզգայ:

**ԶԻՅՈ.**—Այժմս ես հրաժեշտ պիտի տամ ձեզ, առայժմ երեխայիս ձեր խնամքին եմ թողնում, (դանալով Կոտարօին) սիրելի որդի, հնագանդ կըլինես: Ես իսկոյն գնամ այս հարևան գիւղը և շուտով կըվերադառնամ:

**ԿՕՏԱՐՈ.**—Մի թողնիք ինձ մենակ, ինձ էլ քեզ հետ տար (քաշում է մօր ծեռքից):

**ԶԻՅՈ.**—(դուր քաշելով ծեռքը): Ի՞նչ երկշոտ երեխայ ես, Կոտարօ, ի՞նչպէս չես ամաչում, (Տօնամին) տեսնում էք, ինչ ազիդ պահածն է. (փայփայելով նրան) դու իմ խելօք և հնագանդ տղան ես, կաց այստեղ, մի վախեցիր. ես իսկոյն կըվերադառնամ: (Գնում է, նրան նետեւում է Սանսուկէն: Դուրս գնալիս մի քանի անգամ նայում է ընթագմանը որդուն, դուր փակելով նորից մտնում է ներս): Ա՛յ, ներեցէք որ ձեզ նորից անհանգստացնում եմ: Կարծեմ հովհարս թողեցի այստեղ (փնտում են):

**ՏՕՆԱՄԻՒ.**—(մի քանի րոպէց յետոյ): Բայց չէոր ձեր հովհարը ձեռ ձեռքին է, տիկին:

**ԶԻՅՈ.**—(շփոթած): Ա՛յ, իրաւ, ինչ ցըւածն եմ ես: (Դուրս գնալիս նորից տիսուր հայեացք է ծգում ովզու վըայ):

**ՏՕՆԱՄԻՒ.**—(միխթարելով Կոտարօին): Գնամք, սիրելիս, այդպէս մի տիրիր, գնամք որդուս հետ միասին խաղա. (տանում է նրան Շիւէի մօտ, աշխատելով ամեն կերպ ուրախացնել):

## S E U H L 4.

ԳԵՆԶՕ, ՏՕՆԱՄԻՒ, ԿՕՏԱՐՈ և ԱՇԱԿԵՐՑՆԵՐ

**ԳԵՆԶՕ.**—(մտնում է գունատ ու շփոթած, մի րոպէ դրան առաջ կանգ է առնում եւ քննական աշքով դիտում է աշակերտներին ու չի նկատում որ Կոտարօն այստեղ է, Գենզօ, ինքնիրեն): ռամկական ամենասովորական գէմքեր են, ռամկական գլուխներ, որ ոչ մի բանի պէտք չեն, ուղղակի գիւղական այլասերւածք են: (Նստում է եւ նայում շորս կողմը: Այդ ժամանակ Տօնամին նետեւում է նրա ամեն մի շարժածքին, սկզբում զարմացած, իսկ յետոց անհանգստավութեամբ. ապա նստում է նրա դիմաց եւ մի քանի սուպէ լուր մնալուց յետոյ ասում է):

**ՏՕՆԱՄԻՒ.**—Դուք որքան վրդովւած էք և գունատ, իմ ամուսինս, միշտ ինչոր մի բան էք շնչում ձեզ ու ձեզ: Արդեօք մի բան չէ պատահել: Ի՞նչն է ձեզ այդպէս անհանգստացնում և ինչնու էք այդպէս բարկացկոտ հայեացքներ ձգում երեխաների վըայ: Ինդքում եմ ձեզ այդպէս մոայլ մի լինիք: Այս բոպէիս մեզ մօտ բերեցին մէկ նոր աշակերտ, որը մի շատ քնքոյշ և խելօք երեխայ է, նրան քաղցրահայեաց գէմքով հանդիպէք: Ահա նա. (Կոտարօին) այստեղ արի, Կոտարօ, զիուխ տուր քո ուսուցչին: (Կոտարօն խոր գլուխ է տալիս եւ կըկզում ուսուցչի առաջ) Պարոն, ընդունեցէք ինձ, ես ի բոլոր սրտէ կըլինեմ ձեզ հաւատարիմ և հնագանդ:

**ԳԵՆԶՕ.**—(խորասուզած մածմունքների մէջ նայում է նրան) Շատ լաւ, գնա տեղդ: (Մինչդեռ Կոտարօն վեր է կենում, Գենզօն յանկարծ նայում է նրա երեխին եւ յառած աշքերով դիտում է նրա դէմքը՝ աելի ու աելի զարմանքով: Այդ ժամանակ մի քանի անգամ էլ, հայեացքը փոփոխակի Շիւայի վըայ դարձնելով: Ինքն իրեն) Ի՞նչ եմ տեսնում: Այդ դժւ ես, Կոտարօ, (քարձը) ճիշտ է, Արք

այստեղ, կօտարօ և ինձ նայիր: (ինքն թրեն) Իսկապէս, այո, սա նա է, (ըարձր) դու, դու լաւ երեխայ ես, կօտարօ: Գեղեցիկ, համեստ, իսկոյն երեռմ է որ ազնիւ ցեղից է: Այսպէս չէ, այ կնիկ:

**ՏՕՆԱՄԻ.** — Դէհ ի հարկէ: Որքան ուրախ եմ, որ նա ձեզ այդպէս գուր եկաւ. և որ նրա տեսքը հեռացրեց այն ամպերը, որ մռայլում էին ըո դէմքը: Նա լաւ, ջանաէր աշակերտ կըլինի: Նրան հէնց նոր մայրը բերեց:

**ԳԵՆԶՈ.** — Նրա մայրը, Հ'ըմ...Բայց ի՞նչ է: Նրա մայրը դեռ այստեղ է:

**ՏՕՆԱՄԻ.** — Նա շտապում էր, հարեան գիւղում կարեոր գործեր ունէր: Բայց և այնպէս ասաց, որ վերադառնալուց այստեղ կըգայ խօսելու: Նա շուտ կըվերադառնայ, երկար չի մնայ այստեղ:

**ԳԵՆԶՈ.** — Ի՞նչպէս, շուտ կըվերադառնայ: Հա, ի՞նչ էի որ զում ասել... Ես այժմ զբաղւած եմ կարեոր գործերով. աշակերտներին ասա, որ այսօր ես նրանց արձակուրդ եմ տալիս: Տար նրանց այն կողմի սենեակը, թող այնտեղ ինչպէս կուզեն խաղան,, միայն չարութիւն չանեն և ինձ չանհանգստացնեն: (Ռէպի մանուկները) ՀԷյ, ամեն բան կարգի բերէք. դուք ազատ էք: (աշակերտները մ'եժ աղմուկով բարձրանում են տեղներիցը, հաւաքում իրերը և սեղանակների հնտ միասին կիտուա զցում մի անկին: Յետոյ Տօնամիի առաջնորդութեամբ՝ ուրախ-զարթ, աղմուկով, զրուցելով զնում են թեմի յետելը: Գենզօն մտածունքի մէջ ընկղմած նայում է նրանց յետելից: Մի քանի ըրպէից յետոյ Տօնամիի վերադառնում է եւ համոզւած, որ իրենց ոչ ոք չի տեսնուի, կըկում է ամուսնու առաջ):

## Տ Ե Ս Ի Լ 5.

### ՏՕՆԱՄԻ և ԳԵՆԶՈ

**ՏՕՆԱՄԻ.** — Գենզօ, դարձեալ ձեր դէմքը տխուր է. ասացէք, ի՞նչ է պատահել ձեզ, հէնց որ դուք ներս մտաք շփոթւած ու գունատ, ինձ երկիւղ պատեց: Իսկ երբ ըսկսեցիք իւրաքանչիւր երեխայի գիտել, որ տարօրինակ էր, և ներեցէք ասել՝ ինձ վախեցրիք: Յետոյ այս յանկարծակի, հանելուկային ուրախութիւնը, որ փայլեց ձեր աշքերում, երբ տեսաք այն մանուկին, որը ձեզ բոլորովին անծանօթ էր, նոյնպէս զարմացրեց ինձ: Ինձ թւում է, որ

մի ինչոր անբախտութիւն է պատահելու: Խնդրում եմ ձեզ ասացէք, ի՞նչ է նշանակում այս:

**ԳԵՆԶՈ.** — Անբախտութիւն.... Այս, մեզ մատնել են: Այն գաղանիքը, որ մենք պատսպարում ենք և կրթում մի ըիտասարդ պարոնի, իբրև մեր որդու, մերկացրած է, ամեն ինչ յայտնել են նախարարապետ Տօկիթիրին: Հիմա նա ծարաւի է նրա արեան վերջին կաթիլին. նա վախենում է այն վրէժից, որը կարող է լուծել Շիւսան, երբ կըմեծանայ:

**ՏՕՆԱՄԻ.** — Այդ սարսափելի է: Ես նախազգում էի: Բայց դուք ի՞նչպէս իմացաք:

**ԳԵՆԶՈ.** — Տօնի ժամանակ, տանուտէրի մօտ: Այդ հրաւէրը մի խորամանկ թակարդ էր ինձ համար, որպէսզի ինձ ժամանակ չըտան փախչելու: Գենզօ նախարարապետի սենեակապետը 100-ից աւելի մարդով մօտեցաւ ինձ և ասաց. «մեզ ամեն ինչ յայտնի է, Գենզօ». մեզ յանձնիք այն երեխային, որին գու իբրև քո հարազատ որդի. Ես ցոյց տալիս: Այդ փոքրիկ Շիւսայն է: Անխիղճ, դու համարձակւեցիր թագցնել Տօկիթիրի թշնամուն: Կատարիր այն հրամանը, որի համար մեզ այստեղ են ուղարկել: Եթէ դու երկու ժամից յետոյ չըբերես նրա գլուխը, մենք ներս կըխուժենք քո տունը և ինքներս ձեռք կըբերենք նրա գլուխը: Իսկ քեզ կըսպանայ նախարարապետի աւելի խըստապին բարկութիւնը: Ոհա նրա խօսքերը: Ես լաւ պատասխան կըտայի սրի մի հարւածով անիծեալ սրիկային: Բայց ուժի գերազանցութեան դէպքում խորամանկութիւնը աւելի է օգնում, քան ոյժը: Եւ այսպէս, ես բարկութիւնս զսպեցի և ցոյց տալով, որ իբրև թէ հնազանդուում եմ նրան, խնդրեցի միայն փոքր ինչ ժամանակ տալ, որպէսզի կատարեմ այդ հրամանը: Նրա մօտ կանգնած էր Մատսուօ, միակ մարդը պալատում, որը ճանաչում էր Շիւսային և նախարարապետը նշանակել է նրան ստուգել գլխի իսկական լինելը, և նա երկի մոռացել է այն առատաձեռն շնորհ. ները, որ արել է նրան իր նախակին տէրը, և ահա նա մատնում է նրա որդուն: Անազնիւ մարդ, նա այնքան թոյլ և տկար է, որ հազիւ է քարշ տալիս ստքերը, բայց չարագործութիւն և մատնութիւն անելու համար գեռ ոյժ ունի: Լսիր այժմ ինչ պէտք է անենք: Մենք պատին ենք դէմառել և փախչելու ոչ մի հնար չկայ. հիմա ես պէտք է մի գլուխ գտնեմ, որ Շիւսայի գլխի նման լինի, հակառակ դէպքում նրան սպառնում է անխուսափելի մահ: Ես ճա-

Նապարհին մտածում էի, թէ արդեօք չըզոհեմ աշակերտներից մէկին, բայց ով կընդունէ հասարակ գիւղացու գէմքը ազնւազարմ ազնւականի նուրբ զիմագծերի տեղ. Սիրտս այս դժոխային տանջանքով լի եկայ տուն, որ օգնութիւն կտնեմ: Յանկարծ տեսայ մեր նոր աշակերտին: Նա, և այնքան նման է մեր պարոնին, որ կարելի է նրանց շփոթել: Կինս, այդ երկնքի ցուցմունքն է: Աստւածները կամենում են փրկել մեր պարոնին. նրանք իրենք վտանգի ժամանակ ուղարկում են նրա փոխարէն մի ուրիշին. մի կասկածիր, այդ աստւածների կամքն է: Նորեկ երեխան պէտք է մեռնի, նրան չար ոգին է ուղարկել մեզ մօտ: Երբ մենք կապանենք նրան, գլուխը կըյանձնենք պահանջողին, այն ժամանակ հեռու այստեղից, հարկաւոր է իսկոյն փախչել Շիւսայի հետ. եթէ մենք շտապենք, մի քանի ժամից յետոյ կըհասնենք սահմանը. իսկ կաւախի հողի վրայ չեն համարձակվի մեզ հալածել:

**ՏՕՆԱՄԻ.** — Օ՝ չարագոյժ ժամ. միթէ մենք յանցաւոր կերպով պէտք է անմեղ արիւն թափենք: Այո. աւելի նւիրական բան չըկայ, բան եթէ տիրոջը հաւատարիմ. մնալ, նոյնիսկ եթէ մինչև անգամ պահանջւի ամբողջ աշխարհը զոհ բերել դրա համար: Բայց այդ կօգնէ: Դուք ինքներդ ասացիք որ Մատսուօն ինքը պէտք է ստուգի զլիսի իսկութիւնը, նա ճանաչում է Շիւսային և երբէք նրա աչքերը չեն խարի նրան, զոհը իզուր կանցնի և խորամանկութիւնը կըմերկացնէ նա:

**ԳԵՆԶՈ.** — Թող, թող մերկացնէ, ես ուշադրութեամբ կըզնեմ նրա դէմքը, սրիցս բռնած. և եթէ այլ կերպ չի լինի, մի հարւածով կըզորեմ նրան, յետոյ ինչպէս վազը կըյարձակւեմ մնացածների վրայ և կըփախցնեմ բոլորին, կամ կըմեռնեմ իմ պարոնի հետ, որպէսզի նրա անդրգերեզմանային ճանապարհորդութեան ժամանակ լինեմ նրա հաւատարիմ ծառան: Բայց ես շատ էլ չեմ վախենում, որ Մատսուօն կըխորտակէ իմ այս ծրագիրը, որովհետև երեխաների նմանութիւնը զարմանալի է: եթէ կենդանի ժամանակ զանազանութիւն կայ, մեռած ժամանակ այդ բոլորովին չեն նկատի: Մեծ վտանգ է սպառնում մեզ մօր կողմից. եթէ նա անժամանակ գայ և կամենայ տեսնել մանկանը, աղմուկ բարձրացնէ, այդ կըխանզարի մեր փախչելուն այն ժամանակ... եթէ նա դայ... նրան էլ կըսպան....

**ՏՕՆԱՄԻ.** — Նրան էլ... Դուք սարսեցնում էք ինձ.

եթէ նա դայ, ես ամեն կերպ կաշխատեմ նրան պահել՝ խօսեցնելով: Եթէ նա...

**ԳԵՆԶՈ.** — Ո՞չ, ոչ. կարող է պատահել, որ նա այնտեղ, գիւղում մարդկանցից լսած լինի, որ այստեղ ինչոր անախորժ բան պէտք է կատարէլ: Նա անպատճառ կուզենայ տեսնել իր որդուն. ոչ, ոչ, այդ մասին մտածելու ոչինչ չկայ: Ամեն ինչ չափազանց պարզ է գրւած մեր առաջ, իսկ եթէ գայ՝ այստեղից յետ չի գտնուայ, մէկ է, մեզ վիճակւել է այս հրէշային գործը: Մենք պէտք է հրէշ լինենք, նա պիտի մեռնի. այդ անհրաժեշտ է մեր պարոնի կեանքը ազատելու համար:

**ՏՕՆԱՄԻ.** — Ի՞նչ արած, թող հրէշ լինենք, եթէ այդպէս է հրամայում մեզ պարագը (լաց է լինում): Ա՛խ, թշւառ երեխայ, թշւառ մայր, ինչու ընտրեց նա այս օրը՝ մեզ հաւատալու համար իր ամենաթանկագին գանձը: Ո՞հ, վայ մեզ: Մենք որ պէտք է փոխարինենք երեխայի հօրնու մօրը, այժմ լինում ենք նրա դահիճը. սոսկալի գործ է (նա ծածկում է աշքերը ծեղքերով և հնկեկում. Գենզօն նստած է յուզած. այդ ժամանակ ձայներ են լսում, զոտը բացում է, որսից երեւում է նախազաւիթը):

## ՏԵՍԻԼ 6.

(Գեմբան ներս է մտնում. Մատսուօն երեւում է ծածկած պատգարակի միջից. մի խումք գիւղացիք բակում, որոնք խոնարի ողջունում են ասպետներին):

**ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԱՑԻՔ.** — Մեծապատիւ պարոններ, ողորմած եղէք, մեր երեխաներն էլ են այստեղ: Ա՛խ, գթացէք, գթացէք:

**ԱՌԱՋԻՆ ԳԻՒՂԱՑԻՔ.** — Իմ որդին հէնց նոր է սկսել զրել: Ա՛խ, բաց թողէք նրան:

**ԵՐԿՐՈՐԴԻ ԳԻՒՂԱՑԻՔ.** — Տէք, իմ թոռն էլ է այստեղ, եթէ դուք սխալմամբ կտրէք նրա զլուխը, էլ չէք կարող խօ կենդանացնել, տւէք ինձ նրան, պ. ասպետ:

**ԵՐՐՈՐԴԻ ԳԻՒՂԱՑԻՔ.** — Ի սէր աստւածների, լաւ նայէք, իմ երեխան երիտասարդ պարոնին հասակակից է, թողէք ինձ, ի սէր աստւածների, թոյլ տւէք վերցնեմ նրան:

**ՇԱՏԵՐԸ.** — Թողէք մեզ, ինդրում ենք, ողորմած պարոններ:

**ԳԵՄԲԱ.** — (Կոպտովթեամբ հրելով բոլոր գիւղացիներին)

Անիծեալներ, անպիտաններ, իշամեղւի պէս տպվոցները զգել են: Դուրս կորէք այստեղից, ոչ ոք ոչինչ չի անի ձեր յիմար և փոնքոտ լակոտներին: Վերցրէք նրանց և հեռացէք այստեղից: (Եթեսը դարձնում է եւ արհամարհանքով ծիծաղում): Ի՞նչ է, կարծես գիւղական կոշտ ու կոպիտ դէմքերը պէտք է շփոթենք անզնւականի դէմքի հետ: Հա, հա, հա....

**ՄԱՏՍՈՒԻՕ.**—(դուրս է գալիս պատգարակի միջից, կամաց ժօտենում դուանը եւ յենում իր թրի վրայ): Բայց և այնպէս, Գենքա, մի շտապէք դրանց թողնելու: Ինձ վրայ է ընկնում պատասխանատութիւնը, որովհետև երեխային ես եմ ճանաչում: Շատ կարող է պատահել, որ մի որեէ գիւղացի դաւադրութեան մէջ խառն լինի և իր որդուն տայ Շիւսայի տեղը: (Գիւղացիներին) Հանգստացէք: Ասէք ձեր երեխաների անունները՝ ես կընայեմ նրանց և բաց կըթողնեմ:

**ԲՈՂՈՐԾ.**—(բարձրաձայն տալիս են իրենց սրեխաների անունները, միմեանց իսանզարելով):

**ՄԱՏՍՈՒԻՕ.**—Ասացէք կարգով, մէկը միւսի յետեկից: ԱՌԱՋԻՆ ԳԻՒՂԱՅԻ: — Խօմա, Խօմա:

**ԳԵՆԶՕ.**—(կանզնած վերջին սենեակի դուան մօս՝ ամեն անզամ կրկնում է երեխաների անունները, դառնալով դէպի ներս) Խօմա, այստեղ արի:

**ԽՕՄԱ.**—(առաջ գալով) Այստեղ եմ:

**ՄԱՏՍՈՒԻՕ.**—(դիտելով նրան) Սա իր ամբողջ երեսը մրտել է տուշով. եթէ երեսը լւանաք էլ, սրանից աւելի մաքուր չի լինի: Թողէք սրան վազի, այս նա չէ: (Առաջին գիւղացին տանում է նրան ծեռքից ըռնած):

**ԵՐԿՐՈՐԴ ԳԻՒՂԱՅԻ.**—Այստեղ է իվաման, իվաման.

**ԻՎԱՄԱՆ.**—(ժօտենալով) Այստեղ եմ, պապի, ես այստեղ եմ:

**ՄԱՏՍՈՒԻՕ.**—(Նախկին տօնով) Լաւ երեխայ է, թարմ, ինչպէս կարմիր ինձոր. գնա: (Երկրորդ գիւղացին շալակում է ու տանում):

**ԵՐՐՈՐԴ ԳԻՒՂԱՅԻ.**— Իմ բալէս, իմ բալէս, իմ անգին երեխաս:

**ԳԻՒՂԵԼ.**—(15 տարեկան յիմարի մէկը) Ես այստեղ եմ (ժեսնելով որ իվաման հայրը տանում է շալակած): Ինձ էլ տար ուսիր վրայ, հայրիկ. կտանե՞ս, հայրիկ... (ըսկում է լաց լինել):

ԵՐՐՈՐԴ ԳԻՒՂԱՅԻ: — Լաւ, լաւ, մի լար, որդիս. կըտանեմ, մի լար:

**ԳԵՄԲՈ.**—(արհամարհական ծիծաղ) Մատսուօ, շատ դժւար է վճռել խնդիրը այս ձիու ոտներ և մոծակի ձայն ունեցող յիմարի վերաբերմամբ: Այ քեզ իշխանազն, հա, հա, հա.... (Նայում է գիւղացու ետեւից): Նա փախչում է, ինչպէս փախչում է կատուն՝ գողացած մսի կտորը բերնին:

**ՉՈՐՐՈՐԴ ԳԻՒՂԱՅԻ.**— Տօկուսան, Տօկուսան, ի մէր երկնքի, պ. ասպետ. չըշփոթէք նրան պ. Շիւսէյի հետ: Նա գեղեցիկ երեխայ է, պ. ասպետ: (Տօկուսանը ուզում է առաջ անցնել, բայց Մատսուօն նրան ըռնում է):

**ՄԱՏՍՈՒԻՕ.**—Կանգնիր, փոքրիկ, կանգնիր, կարծիս քո խիղճը արդար չէ, թող մի նայեմ քո երեսին: Գլուխդ սեխի նման է, երեսդ սպիտակ (անդադար նայում է նրա եղնսին): Այժմ գնա, վազիր, ինչքան ոյժ ունիս (խփում է նրան):

**ԳԵՄԲՈ.**—(բարկացած) Դուրս բերէք այստեղ այս գիւղացիներին. այն բոլորից յետոյ, ինչոր ես տեսայ, մենակ կարող եմ վճռել: Աղքանոցում միայն աղբ կըլինի: (Գենզօն դուրս է կանչում մնացած երեք աշակերտներին, Մատսուօի հետ նայում են նրանց և թողնում, Գիւղացիք զնում են, Գնմբան և Մատսուօն նստում են Գենզօնի դիմաց):

## Տ Ե Ս Ի Լ 7.

ԳԵՄԲՈ, ՄԱՏՍՈՒԻՕ, ԳԵՆԶՕ և ՏՈՆԱՄԻ

**ԳԵՄԲՈ.**—Հը, ի՞նչ է, Գենզօ. կատարիր այն, ինչոր խոստացել ես. դու երգւեցիր իմ ներկայութեամբ, գլխատելիշխանազնին իմ աչքի առաջ, դէհ, շտապիր և բեր այստեղ գլուխը:

**ԳԵՆԶՕ.**—(կատարելապէս իրեն զսպնով) Ի՞նչ է, կարծում էք, որ ես տուանց երկար մտածելու կրբանեմ նրա օձիքից, պարանոցը յետ կըծալեմ և որով կըվերցնեմ գլուխը, ինչպէս շան վլուխ: Համբերութիւն ունեցէք, ինձ ժամանակ տէք, որպէսզի ես այդ անեմ: (Վեր է կնում եւ ուզում է հեռանալ յետեւի սենեակը):

**ՄԱՏՍՈՒԻՕ.**—Կաց, Գենզօ: (Մի րոպէ անթարթ նայուած է նրա աչքերի մէջ): Իզուր ես աշխատում մեղ խաբել. եթէ կարծում ես, որ կարող ես օգտել կարճ միջոցից և Շիւսային փախչելու հնարաւորութիւն տալ յետեւի դռնից,

իզուր են քո մտածած խորամանկ ծրագիրները, ուշացել ես: Տան շուրջը կանգնած են 100-ից շատ մարդիկ, մկներն էլ չեն կարող դուրս պրծնել այստեղից: Մի երևակայիր, որ դու ինձ կը մոլորեցնես և կը տաս ուրիշ գլուխ, մտածելով թէ մահը կը ծածկէ տարբերութիւնները: Դա հին միջոց է: Դու զբանով ինձ չես խաբիլ: Ձետոյ կը փոշմանես, բայց ուշ կրիխի:

ԳԵՆԶՕ.—(Հազիւ իրեն զսպելով) Թող քո յիմար և  
անտեղի երկիւղդ. Ես կըդնեմ քո առաջ նրա խսկական  
գլուխը, այնպէս որ քո թոյլ ու տկար աշքերը քեզ չեն  
խաբի:

**ԳԵՄԲԱ.**—(անհամբեր) Քիչ խօսիր. որքան կարելի է շտապով գործիդ գնաւ (Գենզօն վերցնում է Գեմբայից փայտեայ արկոր պլահ համար և դուրս է զալիս յետեւի ղոնից):

S B U H L 8.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԲԱՑԻ ԳԵՆԶՈՒՑ

(Տօնամին նստած՝ շուրջն է նայում երկիւղով։ Մատուցն  
հետափուա հայեացքով դիտու է շուրջը, հաշում սեղա-  
նակներն ու զըքերի պայուսակները)

**ՄԱՏՍՈՒԹՅՈ. — Հըմ.՝ տարօրինակ է և անհասկանալի:**  
Միթէ այն սատանի ձագերը, որոնց մենք բաց թողեցինք,  
եօթ հոգի չէին: Ես այստեղ տեսնում եմ մի աւելորդ սե-  
ղանակ ևս, ութերորդը: (Տօնամին) Ասացէք ինձ, այս ում  
սեղանակն է (ցոյց տայով):

ՏՕՆԱՄԻ. — (Երկիրի մէջ) Նոր աշակերտինն է, ալս...  
ի՞նչ եմ գուրս տալիս, ամեննեին նոր աշակերտինը չէ, պա-  
րոն, հաւատացեք ինձ, ճիշտն եմ ասում:

**ՄԱՏՍՈՒԻԾ.**—Լաւ, լաւ, ճիշտ է, բայց թող նա շտապի: Իմ հիւանդութիւնը... մի քիչ էլ յետոյ... (քեմի յետուկց լսում է ընկնող զիակի ձայն. Ցօնամին քարձրաձայն աղաղակում է և ողում է փախչել, բայց իրեն զսպում է և կանգնում սահսափած: Գենգօն՝ մտնում է արկղը ծեռքին և հանգիստ դնում Մատութիւնը):

S B U H L 9

ԳԵՂՋՈ և ԱՌՅԱ

ԳԵՆԶՕ.—ԶԵՐ հրամանը կատարւած է, համեցէք ստացէք Կվան Շիւսայի գլուխը. լաւ հաւաստիացէք, պ. Մատուց Մարտ, որ չըսխալւէք (նստում է քիչ հեռու և նայում Մատուցին, սրից զո՞նած):

**ՄԱՏՍՈՒԹՅՈՒՆ**.—Այժմ ուշադրութիւն: (Մի քանի զինած մարդկանց, որոնց Գեմքան այդ ժամանակ աննկատելի կերպով աչքով է արել, որ մօտենան) Կանգնեցէք այստեղ (ցոյց տարով Գեմքաի կողմը), հսկեցէք երկուսի վրայ: (Նա մօտեցնում է արկոյ, փակ աշքերով և ապա դանդաղ, կարծիս ինքնամոռացովթեան մէջ բաց է անում արկոյի թերանը և յետոյ բացում է իր աշքերը: Մի առժամանակ լրտ նայում է զիմին և զողողուն ծնորով թեթեւ շօշափուի: Երա դէմքին դժարութեամբ զապած հոգեկան վիշտ է արտայացուու վայրկենապէս և խսկոյն անհնտանում: Բոլորը լարած սալսափի մէջ են):

**ՄԱՏՍՈՒԹՅ.**—(կարծ միջոցից յետոյ, սառնասրտութեամբ) Հըմ, անկասկած այս գլուխը Կվանա Շիւսայի գլուխն է, անկասկած, (փակում է արկղի թերանը. Գենզօն և Տօնամին նկատելի կերպով թեթեւացած, հայեացրեթ են փոխանակում. Գեմքան վեր է կենում տեղից):

ԳԵՄԲԱ. — Վերջապէս, դուք լաւ կատարեցիք ձեր բործը, գենզօ, դուք ազնւաբար վարւեցիք, ձեր վարմունքը սրժանի է պարզեցի: Նախկին նախարարապետի որդուն փուսնակ մատնելու, ընդհակառակը թագցնելու համար ինք-երդ պէտք է մահւան դատապարտէիք: Բայց որովհետեւք քաւեցիք ձեր մեղքը, ձեր խսկ ձեռքով զիստելով, և ձեզ ներումն եմ շնորհում. (*Մատուոին*) գնանք, Մատուօ, շատապէնք պալատ և յայտնենք Շինէին ուրախալի ւրը: Նա խիստ անհամբերութեամբ սպասում է մեր գետանութեան հետեւանքներին:

**ՄԱՏՍՈՒԻԾ.**—Եյն, շտապեցէք, Գեմբա, տարէք լուրը  
և նրա հետ միասին զլուխը: Խոկ ինձ ներեցէք, ես հի-  
ւանդ եմ, աւելի՛ հիւանդ, քան երկում եմ, դուք միջնոր-  
դեցէք, որ ինձ թող տան բոլողումին, Թագավորական պալատում:

ԳԵՐԱՅԻՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿՐՈՅԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿՐՈՅԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

մարդկանց հետ։ Մատսուն դժարովթեամբ զնում է նրանց նտելից, յենւելով սրի վրայ։ Նստում է պատգարակ և նրան տանում են։)

## ՏԵՍԻԼ 10.

### ԳԵՆՉՈ և ՏՕՆԱՄԻ

(Նրանք դեռ մի առժամանակ նստած են տեղներում՝ մեխածի պէս, նայելով հեռացողների յետնից, կարծես չընաւատալով իրենց աշքերին։ Յետոյ Գենզօն փակում է դրուը եւ նստում կնոջ դիմաց, երկուսն էլ շռանք են քաշաւ ամբողջ կրծքով։ Տօնամին բարձրացնում է ծնոքերը դէպի երկինք եւ դէպի երկիր շերմեռանդ գոհաբանական աղօթքով։)

**ԳԵՆՉՈ.**—Գոհութիւն աստւածներին, շնորհակալ եմ քեզանից, ով ամենամեծ Բուդդա։ մեր տիրոջ առաքինութիւնները երկնքի հովանաւորութիւնը հրաւիրեցին մեզ վրայ, նա պատեց թխալով սատանաների սրատես աչքերը և շանթահար կաւրացրեց նրանց։ Ուրախացիր, կին իմ։ Կեցցէ մեր Տէրը։

**ՏՕՆԱՄԻ.**—Ուղղակի իմ հաւատալս չէ գալիս. հասարակ խիճը թանկազին քարի տեղ ընդունեցին։ Շնորհակալութիւն աստւածներին սրտիս խորքերից (որսից դուռը ծնծում են. Գենզօն և Տօնամին վախնցած)։

## ՏԵՍԻԼ 11.

### ԶԻՅՈ և ՆՈՑՆՔ.

**ԶԻՅՈ.**—(ղուն ետելից) Էյ, բացէք, բացէք դուռը, ես եմ, ես, նորեկ աշակերտի մայրը։ Թողէք ինձ ներս։

**ՏՕՆԱՄԻ.**—(երկիլով) Ի սեր աստւածների, Գենզօն, մայրն է, մենք կորած ենք, ինչ անենք, ինչ ասենք մենք նրան։

**ԶԻՅՈ.**—(ղուն յետելից) Բաց արէք, բաց արէք (սաստիկ քաղիսում է)։

**ԳԵՆՉՈ.**—(բարկացած Տօնամի վրայ)։ Զայնդ կտրիր, յիմար կնիկ, միթէ ես քեզ չառացի հանգիստ եղիր, մենք նրա հետ էլ կը վերջացնենք այսպէս թէ այնպէս (յուում է Տօնամիին սի կողմը եւ բացում է դուռը. Զիյոն ներս է մտնում)։

**ԶԻՅՈ.**—(եկատելի կերպով յուզած) Ա՛խ, այդ դուք

էք, ով. Գենզօ, մեծարգոյ ուսուցիչ. ես այսօր բերեցի ձեզ մօտ իմ երեխային, ուր է նա. յուսով եմ, որ նա ձեզ ձանձրացրած չի լինի։

**ԳԵՆՉՈ.**—Երէք, նա այստեղ սենեակում խաղում է երեխաների հետ։ Եթէ կամենում էք նրան տեսնել, ես ձեզ կը տանեմ նրա մօտ։

**ԶԻՅՈ.**—Տարէք ինձ նրա մօտ, ես նրան կը տանեմ հետո։

**ԳԵՆՉՈ.**—(վերկենալով) Ուրեմն եթէ այդպէս է, գնանք։ Խնդրեմ ներս մտէք։ (Զիյօ ուղղում է դէպի դուռը. Գենզօն նրա յետելից բարձրացնում է սուրը եւ պատրաստում է հարածել։ Բայց Զիյօն յետ է դառնում եւ ճարպիկութեամբ խուսափում հարածից. նա վազում է դէպի սեղանակները, վերցնում է իր որդու սեղանակը եւ դրանով պաշտպանում երկրորդ հարածից)։

**ԶԻՅՈ.**—Կազէք, թողէք, սպասեցէք։

**ԳԵՆՉՈ.**—(նորից շարժում է սուրը) Սատանան քեզ տանի (Հարածը կտրում է սեղանը, սեղանը ընկնում է ցած, այնտեղից դուրս են թափում ննջեցեալի սպիտակ հազուստը, թղթի կտորներ, որոնց վրայ աղօթնենք են գրած, յուղարկաւրութեան դրօշակ եւ շատ ուրիշ սուրկաներ, որոնք գործ են ածում թաղման ժամանակ)։

**ԳԵՆՉՈ.**—(զարմացած) Վայ քեզ գրող, այս ինչ է նշանակում։ (Թողնում է սուրը) Այս ինչ է նշանակում։

**ԶԻՅՈ.**—(արտասովը հեղեղի պէս թափելով ընկնում է ծնկաշոր) Ա՛խ, պարոն, աղերսում եմ ձեզ, ասացէք, մեռաւ իմ որդին, որպէս քաւիչ զոհ, նա զոհւած է կվան Շիւային, իր մատաղ տիրոջ թէ ոչ։ Ո՞հ, աղաչում եմ ձեզ, ասացէք ուղիղը։

**ԳԵՆՉՈ.**—Ի՞նչպէս, ինչ զոհւեց ձեր որդին որպէս քուիչ զոհ, զոհ էր բերւած. ուրեմն դուք գիտութեամբ էիք բերել, առանձին դիտաւորութեամբ։

**ԶԻՅՈ.**—Ա՛խ, իմ սիրելի, իմ անզին զաւակս։ Նա բերւած էր զոհելու, կամաւոր զոհ է բերւած իր տիրոջը փրկելու համար։ Հապա էլ ինչո՞ւ են բերւած այստեղ այս թաղման շորերը, այդ աղօթքները, այս դրօշակը՝ նամու Ամիդա Բոււսու գրութեամբ։

**ԳԵՆՉՈ.**—Տիկին, դուք ապշեցնում էք ինձ. ես ըմբռնել չեմ կարողանում. դուք ով էք, ձեր ամուսինը ով է (դուռը ծնծում են. մտնում է Մատսուն և հանդիսաւոր կերպով ընկնում գետնի վրայ)։

## ՏԵՍԻԼ 12.

ՄԱՏՍՈՒՅ և ՆՈՅՆՔ

**ՄԱՏՍՈՒՅ** — (ասում է Միջիանէի հեղինակած տղ-ներից):

Հետեւում է ինձ օրով սալորը,  
Թռումեց, թորշոմեց, շորացաւ բալը,  
Միջէ աշխարհումն միայն եղենին  
Մնաց անհոգի, անհաստարիմ:

Ուրախացիր կի՞ս, որովհետև մեր որդին զոհւեց մեր պ. համար: (Չիյո բարձրածայն հեկեկալով ընկնում է յատակի վլայ:)

**ՄԱՏՍՈՒՅ**. — Իմ սիրելի կի՞սս, իմ բարի և հաւատարիմ ամուսինս, լաց քո մայրական վիշտը, դու իրաւունք ունիս: (Գենզոին) Ներեցէք մեզ, Գենզո, ծնողական սիրտը չէ կարող զապել իրեն. նա պահանջում է իր իրաւունքները:

ԳԵՆԶՕ. — (զարմացած և զգացած) Ես մինչեւ հիմա ուշըի գալ չեմ կարողանում, երազ է թէ իրականութիւն: Միջէ դուք, Մատսուօ, Տօկիխիրի վասսալը մեր թշնամին չէք: Զէ որ ընդմիշտ խզւած է այն կապը, որ միացնում էր ձեզ Միջիանէի տան հետ:

Իսկ այսօր, ինչպէս ձեր... ձեր հարազատ որդուն, գիտակցաբար ձեր սեպհական որդուն... դուք տեսնում էք ես շշմած եմ:

**ՄԱՏՍՈՒՅ**. — Դուք իրաւունք ունիք զարմանալու: Ա՛խ, թշւառ ճակատագիրը տարաւ ինձ անուղիղ ճանապարհով: Նա հրապուրեց ինձ դառնալու այն մարդու վասսալը, որը կատաղում է այն բոլորի դէմ, որոնց ես մանկութիւնից պաշտել եմ և սիրել: Իմ իսկական տիրոջ, իմ հարազատների, իմ հօր, իմ եղբայրների հովանաւորների դէմ: Ինչքան դառն կերպով տանջւում էի, կտրելով ինձ նրանց սիրուց: Լսելով թէ ինչպէս ինձ նախատում են և իրաւացի կերպով ապերախտ անւանում: Հիմա այս տանջանքները ես կրում եմ իմ մեղերի, իմ վատ գործերի համար: Բայց ես այլիս ոյժ չունէի համբերելու: Ես չէի կարող ծա-

ռայել Տօկիխինի մօտ, ես ինձ ձևացրի հիւանդ և խնդրեցի ինձ ազատել ծառայութիւնից: Հէնց այդ ժամանակ նրա ականջին հասաւ, որ դուք ձեր տան մէջ թագցրել էք կվան Շիւսային, իսկոյն հրաման արձակեց, որ կտրեն Շիւսայի գլուխը և ժամանակ չտան, որ դուք կարողանաք փախչել: Նա հրամայեց իշխանազնի գլուխը յանձնել իրան ի նշան, որ հրամանը կատարւած է: Իսկ ինձ, որպէս Շիւսային մենակ ճանաչողի, հրամայեց միանալ դեսպանների հետ, որպէսզի հաւաստիացնեմ նրան գլխի իսկութիւնը: միայն այս պայմանով էր հրաժարականս լնդունում: Դուք տեսաք ինձ իմ վերջին պաշտօնական պարտականութիւնս կատարելիս: Ես իբոլոր սրտէ գոհութիւն եմ մատուցանում աստւածներին նրա համար, որ նրանք բարեհաճեցին ազատել ինձ իմ ծանր պարտքից: Գենզօ, ես հաւատացած էի, որ դուք միջոցներ կը փնտոէք ազատելու երիտասարդ պարոնին մարդասպանների ճանկերից: Բայց ինչ կարող էք անել, երբ փախչելու մասին մտածել անգամ չէր կարելի. ձեր միակ փրկութիւնը մնում էր խարէութիւնը: Այդ ժամանակ ես տեսայ, որ իմ հերթն է եկել. իսկոյն ես խորհրդակցեցի կնոջս հետ, իմ խեղճ, բայց քաջ կնոջ հետ, և ուղարկեցի ձեզ մօտ իմ որդուն, թողնելով աստւածներին և ձեզ՝ իբրև զոհ. և երբ ես եկայ այստեղ, որ վերջացնեմ գործս, հաշւեցի սեղանակները, մէկը աւելորդ էր. այն ժամանակ ես հասկացայ, որ իմ որդին այստեղ է և թէ ինչ է սպասում ինձ....

«Միջէ աշխարհումն միայն եղենին,  
Մնաց անհոգի եւ անհաստարիմ:»

Այս խօսքերը մեր անմոռաց տիրոջ խօսքերն են, որնք շարունակ ննջում էին իմ ականջին և ամբողջ աշխարհը գոռում էր իմ երեսին՝ «այդ, դու ես, այդ դու ես...» Ո՞հ, ըմբռնիր իմ տանջանքները, եթէ ես չունայի որդի, որը համաձայնէր զոհել հօր մեղքի համար, ես և իմ բոլոր ցեղը յաւիտեան ծաղը ու ծանակ կլինէինք ամբողջ աշխարհում: Ո՞հ, իմ թանկագին որդի, մեր պատւի փրկիչ:

ԶԻՅՈ. — Մեր պատւի փրկիչ. թող այս խօսքը մեր սուրբ զոհը լինի մեր թանկագին զաւակի երանելի հոգուն և լցնէ նրան այն աշխարհում ամենամեծ ուրա-

խութեամբ։ ԱՌի, երբ ես նրան թողնում էի այստեղ, իսկ նա ուզում էր գալ իմ յետելից, ինչպիսի աննկարագրելի ցաւով էր իմ սիրաս ձմլում, երբ մտածում էի, որ թողնում եմ երեխայիս վրէժինդիրների ձեռքին։ Թողէք, թողէք մէկ անգամ էլ գրկեմ նրա անշնչացած դիակը, թողէք վերջին անգամ սեղմեմ իմ կըծըին սիրեցեալ երեխայիս (լաց լինելով ընկնով է զնտին)։

**ՏՕՆԱՄՄԻ.**—(մօանում՝ է նրան) Թշւառ մայր, ես  
հաղորդակից եմ ձեր դառն ցաւին. երբ ես յիշում եմ  
նրա խօսքերը, որով ինդրում՝ էր ուսուցչին՝ «ընդունե-  
ցէք ինձ պ., ես հաւատարիմ և հնազանդ կլինեմ», իմ  
ամբողջ մարմնովս մի դող է անցնում: Ես գեռ նրա հա-  
մար օտար եմ, բայց դուք, որքան կըտանջւէք դուք, որ  
նրա մայրն էք:

**ՄԱՏՍՈՒԹՈ.**—Յաղթիր քո անսահման վշտերին, իմ  
թանկագին կինս. մենք կը տանենք այդ ծանր փորձանքը,  
որ նշանակւած է մեզ երկնքի կամքով: (ԳԵՆԱԳՈՒՆ) ԳԵՆԱԳԾ,  
նա իմանում էր, երբ իմ կինս բերում էր ձեզ մօտ, որ  
գնում է դէպի մահ: Նրան ասացի այդ. նա եկաւ իր  
ազատ կամքով, քաղցրիկ մանուկս հազիւ 8 տարեկան էր,  
նա եկաւ անվախ հերոսի նման: Ի՞նչպէս մեռաւ նա, ԳԵՆ-  
ԳԾ: արդեօք խնդրեց, որ խնալէր իր հեանորո:

**ԳԵՂՋՈ.**—Նա մեռաւ ինչպէս հերոս, ոչ մի տղամարդ մահւան վրայ այդպէս չէր նայել, ինչպէս նա էր նայում. երբ ես հանեցի սուրս և նրա ականջին շշնջացի, որ նա պէտք է մեռնի, հէնց այն ըոսէին, քնքոյշ ժպիտով քաշ ձգեց վլուխը հարւածին դիմաւորելու համար:

**ՄԱՏՍՈՒԻԾ.**—Ո՞հ, քաջ զաւակ, իմ հաւատարիմ և  
բարի որդի. այդպէս էլ քաջ մեռաւ իմ եղբայրը պարոնի  
համար. երկուսն էլ հիմա կլանեն իրանց հանդիպելը  
մէկ մէկու հետ այն աշխարհում. երկուսն էլ կըհրձւին  
իրանց զոհ բերելու համար (փողծկում է):

Ներեցէք ինձ, Գենզօ, ես էլ ոյժ չունիմ զսպելու իմ արտասունքները (լաց է լինում. լաց են լինում և միաները):

(Ծիսայ ներս է մտնում. լսելով վերջիններիս ծայնը իսկոյն  
մտնում է Ծիսայի մայրը) առաջինները:

ՇիհԱՅՑ. — Ինձ համար, ինձ համար է եղել այս սար-սափելի դէպըը. ախ եթէ ինձ ասէին, որ չարագործները ինձ են փնտում, երբէք ես թոյլ չէի տայ այդպիսի զոհ իմ փոխարէն։ Ինչպիսի ցաւ է. միթէ ինձ համար ամօթ չէ։ (Զեններով երեսը ծածկաւ բռլրը հեկեկում են. Մատուուն լուն վեր է կենում տեղից մօտենում է դրանք և այնտեղ կանգ-նողներին ինչ որ նշան է տալիս):

**ՄԱՏՍՈՒԻԾ.**—(դասնալով Շիւային) Երիտասարդ պարն, ես դատարկ ձեռքերով չեմ եկել ձեզ մօտ, ես պատրաստել եմ ձեզ համար ամենահրաշալի մի ընծայ: Նայեցէք, այստեղ (ցոյց է տալիս դէպի դուռը, որին մի քանի մարդիկ ծածկած պատզարակ են մօտեցնում, պատզարակից դուրս է գալիս Շիւայի մայրը: Նա ներս է մտնում սենեակ):

ՇիհԱՅՑ.—Ի՞նչպէս, այս իմ մայլու է, իմ սիրելի  
մայուս:

**ՇԻՒԱՅՈՅԻ ՄՈՅՏՐԸ.—**իմ զաւակ, զաւակս (զրկախառնութեան):

ԳԵՆԶՕ.—(Քիչ անցնելուց յետոյ) Այս ի՞նչ եմ տեսնում:  
Արդեօք աչքերս չե՞ն խաբում ինձ, Այդ դժւք էք, ազնիւ  
Ցիկին, ինչ բաղդաւոր հանդիպում. վաղուց էինք մենք  
Ճեզ կորած համարում: Ո՞րտեղ էիք դուք այսքան ժամա-  
նակ և որտեղ էիք ապաստան գտել:

**ՄԱՏՍՈՒԻԾ.** — Թոյլ տւէք ձեզ բացատրել: Երբ արիւ-  
նարբու բոնաւորը սպանում էր ոչնչացնել Սաղաւարայի  
ամբողջ ցեղը, ևս ծածուկ փախցրի Նորին Մեծութեան  
տիկնոջը Սագու քաղաքը: Շուտով իմացւեց տիկնոջ այն-  
տեղ լինելը: Այն ժամանակ ևս հոգևորականի զգեստով  
գնացի նրա մօտ, շատ վտանգներից խուսափելով նրան  
բերեցի այս կողմերը: Այստեղից ոչ հեռու: Այստեղ էլ  
մենք ապահով չենք: Ուստի պատրաստուեցէք այստեղից  
հեռանալու: Հարկաւոր է շտապել և շուտով դուրս գալ  
կաւախիրի երկրի սահմաններից: Այստեղ մեզ կըդիմաւո-  
րեն Մեծ Տիկնոջ աղջկերը, որոնք սրտատրով սպասում  
են իրենց մօրը և եղբօրը: Ամենափոքր դանդաղումը կա-  
րող է ամեն ինչ փչացնել. (Զիյօթն) իսկ հիմա, Զիյօ, կա-  
տարենք մեր ծնողական վերջին պարտքը, յանձնենք հոգին

մեր սիրելի որդու թանկագին դիակը և հոգեհանգստեան զոհեր անենք: (Տօնամին զնում է եւ բերում փաթաթւած դիակը: Մատուուն եւ Զիյոն հանում են իրենց վերնազգեստը, որի տակին հազած ունեն սպիտակ սպոյ շորեր):

**ԴԵՆՅՈՒ.** — ԱՇ, Մատուուծ, մեր կողմից անդթութիւն կը լինի, ձեզ վշտահար ծնողներիդ թողնել թաղման հանդիսի համար հոգալու, ես և կինս կը հոգանք այդ մասին....

**ՄԱՍՍՈՒԻԾ.** — Թոյլ տւէք ես կատարեմ այդ բոլորը. (Աշանակալից եղանակով) չէ որ պէտք է թաղեն ոչ թէ իմ որդուն, այլ իշխանազնին (Նա վերցնում է դիակը և տանում. զնում են բոլորը նրա յետեւից լաց լինելով):

Վ Ե Ր Ե Գ Ո Յ Թ



ԱՂԲԻՒՐ-ՏՈՐՈՅԻ ՀՐԱՏԱՐԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Զբաղացած եւ սակառաթիւ)

	Գինը
ՍԱՖՕ, պօէմ—Ա. Լ.	50 կ.
ԱՂՔԱՏՆԵՐԻ ՄԻՐՏԸ, փոխգր.—Դ. Մ. Շահ.	10 »
ՄԵՂԱՆՉԵԼ ԵՄ—Դ. Լուկաշնիչ	15 »
ՀԻՒԱՆԴԱՊԱՀ ՈՐԴԻՆ—Էղմօնդո դ'Ամիշիս Թարգմ.	
առ. Բիտիչ	7 »
ԻՆՉՊԵՍ ԶԱՐԴԱՐԵԼ ՏՕՆԱԾԱՌԸ—Զարուհի	20 »
ԼԵՒ ՏՈԼԱՏՈՅ, կենսագրակ—Ձ. Տ.-Դ.	10 »
ԻՄ ՏՕՆԱԾԱՌԸ—Մաղամէս	30 »
ԿԱՄՔԻ ՈՑՔԸ՝ ՆԱՊԱԼԿՈՆ, Զարուհի	20 »
ԱԻԵՏԻՔ ԱՐԱՄԽԱՆԵԱՆ ինքնակենսագրութիւն	20 »
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒԻՆԻ բազմաթիւ պատկերներով կեանքն ու մահը	30 »

Պ Ի Է Ա Ն Ե Բ

(Մանկական թատրոն)

ՍԽԱԼՄՈՒԻՔ, կոմ. 2 գործ. Միջակով	7 »
ՍՈՒՐԵՆԻ ԿԱՐԴԱԼԸ, 1 գործ. Ա. Պ. Մ. Մ.	10 »
ԲԺՇԿԻՈՂՆԵՐ, 1 գործ. Վոգրւիլ Յար. Օրոն.	10 »
ԳԱՐԵԶՈՒԻԿ, ճին դարերի լեգենդա 1 գործ. 2 պատկ.	
Ալ. Արէլիան	10 »
ԳԱՃԱՋ, 1 գործ. զաւեշտ, Ալ. Արէլիան	10 »

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ իշխ. Սուլբատովի, Թարգմ.

Ձ. Տ.-Գրիգորիանի	50 »
ԶԻՒՆ, Ստ. Պշիբըշնակի, Թարգմ. Ձ. Տ.-Գ.	40 »
Մամուլի տակէ	
ԱՐՈՉԱ, Fantasie-իրականութիւնից 5 գործող.	
7 պատկ, Տիգօ	1 ր.

Դիմել Տիֆլիս, Բյոր Պечати. Գօլօվ քր. 41.

ՀՀ Ազգային գրադարան



NL0389833

74.331

